ՄՐԲՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ ռեկտոր,
Հոգեբ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՄԵԿԴԱՐՅԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆՆ ԸՆԴԱՌԱՋ

Հազարամյա հայոց պատմության ընթացքում՝ մեր ժողովրդի գոյապայքարի օրհասական պահերին, հաճախ են վտանգվել մեր ազգային նկարագիրը, ամրոցների դեր կատարող դպրոցները և մեր ինքնության վկայագիր մայրենին: Մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործընթացները ազգապահպան նպատակներին ուղղորդելու մեր ժողովրդի մեծագույն կամքի ու ջանքի շնորհիվ, մաշտոցյան գրերի բացած լույսի արահետով դիմակայել ենք բոլոր փորձություններին:

Բոլոր ժամանակներում չարի դեմ մեր զենքը եղել է դպրությունը, հենց դպրության լույսն է մեզ ճանաչելի դարձրել, և այդ լույսով ենք առաջնորդվում նաև այսօր:

Հայ կրթամշակութային հարուստ պատմության մեջ յուրահատուկ դեր է վերապահված ուսուցիչներ պատրաստող բարձրագույն ուսումնական հաստատությանը՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին, որն այսօր արդեն հատել է իր գոյության մեկդարյա սահմանագիծը: Հոբելյան, որը կերտել են մանկավարժական գործի նվիրյալ բազմաթիվ երախտավորներ՝ իրենց անունն ու հետագիծը թողնելով համալսարանի 100-ամյա տարեգրության մեջ: Յուրաքանչյուր սերունդ ուսուցիչների պատրաստման առաքելության մեջ իր յուրահատուկ ձեռագիրն է թողնում, գիտակրթական գործի հանդեպ իր ջերմությունն ու սերը փոխանցում նոր սերնդին՝ նրան դարձնելով կրթության լույսի նոր ժամանակների ջահակիր:

21-րդ դարի ուսուցիչն այլ նկարագիր ունի. ժամանակակից տեխնոլոգիաների դարն աննախադեպ պահանջներ է դնում նրա առաջ՝ սովորեցնել սովորել, համընթաց քայլել համաշխարհային զարգացման միտումներին, երկրի համար ռազմավարական նշանակություն ունեցող կրթության գործը բարձրացնել նոր որակական աստիճանի:

Իր 100-ամյակի շեմին Մանկավարժական համալսարանը պատվով է կրում կրթության մեծ ջատագով ու լուսավորիչ Խաչատուր Աբովյանի անունը, ամրագրում հրաշալի ավանդույթներ, որոնցով առաջ է տանում գիտակրթական գործունեությունը, հայ ուսուցչի նոր կերպարի կերտման իր մոտեցումները ձևավորում ժամանակակից աշխարհի գիտակրթական գործընթացների համատեքստում: Միաժամանակ հայ ուսուցչի ազգային նկարագրի պահպանումն անվտանգության խնդիր է, որի համար անչափ կարևոր գործունեություն է իրականացնում «Հայագիտական հանդեսը», քանզի հայ ուսուցչի աշխատանքով է մեծապես պայմանավորված Հայաստանի ներկան ու բարեկեցիկ ապագայի հետ կապված մեր ստեղծագործ իղձերի իրականացումը:

Շնորհավոր 100-ամյակդ, սիրելի Մանկավարժական համալսարան: Թող քո հարազատ հարկի ներքո հարատևի ուսուցչական սերունդների երթը: